ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2025 թ. հոկտեմբերի 8-ի թիվ 2 նիստի

Գիտական խորհրդի նիստը սկսելուց առաջ նախագահ Ն. Մարտիրոսյանը շնորհավորեց գիտխորհրդի նորընտիր անդամներին՝ Մեդիաուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆեսոր Տ. Սիմյանին և սովորող նոր անդամներին:

Այնուհետև առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- **Ժուռնալիստիկայի պատմության, տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ Մարի Նաիրիի Մխիթարյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար հաստատելու հարցը:**

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Դ. Պետրոսյան, Ա. Մենեմշյան, Ն. Վարդանյան, Զ. Մարգսյան:*

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>- ա) Մարի Նաիրիի Մխիթարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ավանդույթներ և նորարարություն. ՀՀ առցանց լրատվամիջոցների մոնետիզացիայի գործիքները»:
բ) Գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Վլադիմիրի Պետրոսյանին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Մագիստրոսի կրթական նոր ծրագրի հայտը հաստատման ներկայացնելու հարցը:

Գիտական խորհրդին ներկայացվեց Ժուռնալիստիկայի ու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետների համատեղ մշակած «Մեդիակառավարում և մարքեթինգային հաղորդակցություն» մագիստրոսական նոր կրթական ծրագրի հայտը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Ն. Վարդանյան, Ա. Մենեմշյան:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>.-«Մեդիակառավարում և մարքեթինգային հաղորդակցություն» մագիստրոսական կրթական ծրագրի հայտը երաշխավորել ներկայացման՝ ըստ ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- **Տ. Դանիելանի հաղորդումը Տոմսկի պետական համալսարան այցի մասին:**

Տ. Դանիելյանը տեղեկացրեց, որ գիտական դրամաշնորհի շրջանակներում սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 2-ը Տոմսկի պետական համալսարան են այցելել գիտական խմբի անդամ Լ. Մարտիրոսյանի հետ՝ հանդիպելու նախագծի համանախագահ և արտասահմանյան գործընկեր, Ռուսաստանի Տոմսկի համալսարանի Ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նատալյա

Նիկոնովայի հետ: Մեկշաբաթվա այցի ընթացքում տեղի են ունեցել արդյունավետ հանդիպումներ, քննարկվել հնարավոր նոր ծրագրերը, առաջիկա անելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Տ. Դանիելյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Ավարտական աշխատանքների և մագիստրական թեզերի թեմաների ու գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Դ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ մշակվել են թեմաներ, ըստ ծանրաբեռնվածությունների առանձնացվել են ղեկավարները:

Ն. Վարդանյանը ներկայացրեց մագիստրական թեզերի թեմաները և առաջարկվող ղեկավարներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Ա. Մենեմշյան, Տ. Միմյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրական թեզերի թեմաները և գիտական ղեկավարներին:

ԼՍԵՑԻՆ.- «Լրագրություն» կրթական ծրագրի բարելավման աշխատանքների մեկնարկի մասին Ա. Մենեմշյանի հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Տ. Միմյան, Ք. Ալազուլյան, Ն. Վարդանյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ